



<<Նոր ժամանակի կրթություն>>

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ

ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում:

Ինչպիսին է մարդու դերը բնապահպանության կամ էկոլոգիայի մեջ:

Ինչպես կարող է միջամտել կամ օգտակար լինել բնապահպանությանը;

Ինչպիսին է էկոլոգիական դաստիարակությունը և կրթությունը դպրոցում:

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝

Կոստան Զարյանի անվան 117 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն.....	3
Էկոլոգիան և բնապահպանությունը.....	5
Էկոլոգիական հիմնախնդիրներ.....	8
Շրջակա միջավայրի պահպանություն.....	9
Դաստիարակություն: Դաստիարակության նպատակը, խնդիրները.....	11
Էկոլոգիական դաստիարակություն.....	12
Էկոլոգիական դաստիարակության միջոցները և ուղիները դպրոցում...	15
Էկոլոգիական դաստիարակության նպատակն ու խնդիրները.....	17
Եզրակացություն.....	20
Գրականության ցանկ.....	21

Ներածություն

Բնության պահպանությունը, հոգածությունը, նրա ռեսուրսների խելամիտ և խնայողական օգտագործումը ներկայիս միջազգային լուրջ պրոբլեմ է: Մարդը պետք է գիտակցի, որ ինքը բնության մի մասնիկ է, և որ կանաչ բույսերը կենդանի օրգանիզմներ են, որոնք նպաստում են կյանքի հարատևմանը:

Էկոլոգիա հասկացության հիմքում ընկած է մայր բնությունը, իսկ նրա հավասարակշռության պահպանությունը, որը շատ վաղուց է սկսված, դարձել է համամարդկային հիմնախնդիր ու կենտրոնական հարց:

Այսօր, տեխնիկայի զարգացման դարաշրջանում ,անչափ կարևոր է երեխաների էկոլոգիական դաստիարակությունը, որի միջոցով էլ նրանք ունենում են մասնակցություն բնապահպանության վեհ ու անչափ կարևոր գործին:

_Եթե ուզում ենք, որ մեր մոլորակը և ժողովուրդները գոյատևեն, ապա յուրաքանչյուր մարդ ,յուրաքանչյուր դեռահաս,պատանի , երիտասարդ կամ մանուկ երեխա,պիտի սովորի ու կարևորի գնահատել կյանքն ու շրջապատող աշխարհը: Քանի որ մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում.

ա/ Երբ մարդը բնությունից կորզում և օգտագործում է ոչ այնքան , որքան կարելի է և ոչ այնտեղ,որտեղ կարելի է,

բ/ Երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրության այնքան թափոններ և այնքան մեծ քանակով ,որ բնությունը չի հասցնում <<մարսել>>, այսինքն չի

հասցնում ինքնամաքրվել:Եվ երկու դեպքում էլ տեղի է ունենում էկոլոգիական ճգնաժամ, աղետ:

Ուստի անչափ շատ կարևոր է, որ առօրյա գործունեության միջոցով տալ կոնկրետ , գործնական գիտելիքներ՝ շրջապատող բնության, առարկաների ու երևույթների վերաբերյալ:Այս գործում , միանշանակ, մեծ է հատկապես դպրոցի դերը, քանի որ այստեղ է իրագործվում կազմակերպված, պլանավորված դաստիարակությունը:

Փաստացի օրինակներով պետք հասկացնել սովորողներին,թե ինչու պահպանել բնությունը: Այսպես՝ ուսուցիչ- դաստիարակը իր աշակերտներին պարզաբանում է, որ մարդն առանց թթվածնի կարող է ապրել երկու րոպե, իսկ առանց ջրի կարող է ապրել երեք օր; մեր օրերում մթնոլորտը աղտոտում են ատոմային էլեկտրակայանների վթարները, ցինկի, կապարի , սնդիկի արդյունաբերությունը և այլն;

Աժխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել << էկոլոգիան որպես գլխավոր հիմնախնդիր և նրա դաստիարակության իրականացումը հանրակրթական դպրոցում;

Էկոլոգիան և բնապահպանությունը

Ն. Մ. Սկատկինը գրել է:

<<Էկոլոգիական շատ կարևոր կենսախնդիր է, որի լուծումից է մեծ մասամբ կախված շրջակա միջավայրի պահպանությունը և մարդու առողջությունը>>:

Երկիր մոլորակի վրա կյանքի պահպանման հիմնական երաշխիքը բնապահպանության, էկոլոգիայի կայունությունն է: Մենք գիտենք, որ էկոլոգիա տերմինը ներմուծվել է գիտության մեջ գերմանացի կեսաբան Էրնեստ հեկկելի կողմից 1866թ-ին; Էկոլոգիա բառը առաջացել է հունարեն երկու բառից՝ օյկոստուն, լոգոս-գիտություն: Էկոլոգիան ուսումնասիրում է կենդանի օրգանիզմները, դրանց և շրջակա միջավայրի միջև եղած փոխհարաբերությունները;

Էկոլոգիան ավելին է քան շրջակա միջավայրը, այն մարդուց անջատ չէ: Այն երկրագնդի բոլոր բնակիչների համար գործնական մեծ նշանակություն ունեցող գիտություն է, և բավական է որ մարդկության գոյությունը ուղղակիորեն կախված լինի այդ գիտության առաջընթացից: Մարդն իր գործունեությամբ սերտորեն կապված է բնության , շրջակա միջավայրի տարաբնույթ օրգանիզմների՝ օդի, ջրի, հողի հետ: Այսինքն մարդ-բնություն կապն անքակտելի է:

Բնությունը բարեկամաբար մարդուն տալիս է ամեն ինչ ապրելու համար: Մարդն էլ իր հերթին պետք է պահպանի բնությունը: Սակայն իր կենսագործունեության ընթացքում , մարդը չճանաչելով բնությունը, չիմանալով բնության օրենքները, վերափոխում ու խախտում է բնության կանոնավոր կյանքը: Չիմանալով բնության մեջ հավասարակշռության անհրաժեշտության մասին, մարդը կարող է վնաս հասցնել գյուղատնտեսությանը: Բնության

հանդեպ ոչ բավարար հոգածությունը հանգեցնում անդառնալի կորուստների, շատ կենդանիների անհետացմանը, բնության կենսաբազմազանության խախտմանը: Դրանցից խուսափելու համար ստեղծվեցին արգելոցներ, բայց դեռևս բավարար չեն կենդանական և բուսական աշխարհի անվտանգությունը լիարժեքորեն ապահովելու համար: Եվ բնությունը պաշտպանելու համար եկան բնապահպանները՝ էկոլոգները, որոնց ուսումնասիրության առարկան երկիրն է, բնությունը, իսկ գիտությունը, որը սկսեց ուսումնասիրել կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի օրգանական և անօրգանական բաղադրիչների միջև բոլոր տեսակի փոխհարաբերությունները կոչվեց էկոլոգիա: Բնապահպանության համաշխարհային միության տվյալներով բնաջնջվել են կենդանիների 844, կաթնասունների 23 %-ը և թռչունների 16%-ը կանգնած է վերացման եզրին: Ամեն տարի այրվում է 1 միլիարդ տոննա վառելիք և մթնոլորտ են արտանետվում միլիոնավոր տոննա ծծմբի ու ածխածնի, ազոտի օքսիդներ, որոնց մի մասն էլ ետ են վերադառնում թթվային անձրևների, մրի, ու փոշու տեսքով: Հողն ու ջուրն աղտոտվում են արդյունաբերական և կենցաղային հոսքերի, նավթամթերքների պարարտանյութերի ռադիոակտիվ թափոնների միջոցով:

Միջավայրի ցանկացած բաղադրիչ կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն օրգանիզմների գոյության և տարածման վրա և առաջ բերել դրանց մոտ հարմարվողական գործոններ, որոնք էլ կոչվում են էկոլոգիական գործոն:

Էկոլոգիական գործոնները լինում են

1. ոչ կենսածին(աբիոտիկ)
2. կենսածին բիոտիկ)
3. մարդածին (անթրոպոգեն)

Ոչ կենսածին գործոնները անկենդան բնության հետ են կապված: դրանց են վերաբերում կլիմայական փոփոխությունները՝ ջերմաստիճանը, խոնավությունը, ճնշումը, լույսը, միջավայրի թթվայնությունը, աղայնությունը, ռադիոակտիվ

Ճառագայթումը: Այս ամենը կապված են անկենդան մարմինների հետ և ուղղակի ազդում են կենդանի օրգանիզմների գործունեության վրա: Ոչ կենսածին գործոնները անկենդան բնության հետ են կապված: Դրանց են վերաբերում կլիմայական փոփոխությունները՝ ջերմաստիճանը, խոնավությունը, ճնշումը, լույսը, միջավայրի թթվայնությունը, աղայնությունը, ռադիոակտիվ ճառագայթումը: Այս բոլոր գործոնները իրենց ծագմամբ կապված են անկենդան մարմինների հետ և ուղղակի կամ անուղղակի ազդում են կենդանի օրգանիզմների կենսագործունեության վրա, որոնք էլ դասակարգվում են՝ ֆիզիկական, քիմիական, հողային գործոնների:

Կենսածին գործոնները կապված են կենդանի գործոնների գործունեության հետ; Կենդանի օրգանիզմների միջև փոխազդեցության բոլոր հնարավոր ձևերն են: Օրգանիզմներն առաջացնում են համակեցություններ, որտեղ անընդհատ պայքարում են սննդային և այլ պաշարների համար: Կենսածին գործոնները դասակարգվում են՝

1. չեզոքածին, երբ երկու տեսակներն էլ միմյանց վրա ոչ մի ազդեցություն չունեն:
2. մրցակցություն, երբ երկու տեսակներն էլ միմյանց վրա անբարեպաստ ազդեցություն են թողնում:
3. սիմբիոզ՝ երբ երկու տեսակներն էլ չեն կարող գոյատևել առանց մեկը մյուսի;
4. գիշատչություն՝ երբ գիշատիչը սնվում է իր զոհով:
5. մակաբուծություն, երբ մակաբույծը խանգարում է իր տիրոջ աճին ու զարգացմանը;

Մարդածին գործոններ են այն բոլոր գործոնները, որոնց ծագումն ուղղակի կամ անուղղակի կապված է մարդու գործունեության հետ: Հիմնական մարդկային գործոնների թվին են պատկանում կենդանիների ու բույսերի տեղափոխումը այնտեղ, որտեղ դրանք երբեք չեն ապրել ,տեսակների ոչնչացումը, հողերի մշակումը, անտառների անհետացումը, մթնոլորտի, ջրոլորտի , հողի աղտոտումը, պարարտանյութերի , քիմիական միջոցների կիրառումը և այլն:

Էկոլոգիական գործոններն էլ են դասակարգվում՝

1. պարբերական՝ ջերմաստիճանը, լույսը, խոնավությունը և այլն

2. ոչ պարբերական՝ հրաբուխ, երկրաշարժ, ջրհեղեղ և այլ բնական աղետներ:

Էկոլոգիական հիմնախնդիրներ

Բոլոր այն հիմնախնդիրները որոնք ծագում են շրջակա միջավայրի և մարդկային հասարակության փոխհարաբերության ընթացքում, կոչվում են Էկոլոգիական հիմնախնդիրներ, որոնք էլ հանգեցնում են բնության կառուցվածքի և ֆունկցիայի խախտմանը: Դրանցից են.

ա) աղբանության հիմնախնդիր

բ) որևէ բնակավայրում մաքուր խմելու ջրի հիմնախնդիր

գ) բնակչության շրջանում ծագած որևէ վարակիչ ,ժառանգական հիվանդության հիմնախնդիր

դ) մթնոլորտի աղտոտման և օզոնի շերտի քայքայման հիմնախնդիր

ե) անտառահատման հիմնախնդիր

զ) հողերի վատթարացման, էրոզիայի հիմնախնդիր

է) անապատացման հիմնախնդիր

ը) սննդային հիմնախնդիր

թ) ձկնորսության, որսորդության հիմնախնդիրներ և այլն:

Աղբահանության հիմնախնդիրները ցանկացած երկրում կարևոր նշանակություն ունեն, ինչպես շրջակա միջավայրի պահպանման, այնպես էլ մարդու առողջության համար: Աղբահանությունը ոչ ճիշտ կամ ժամանակին չկատարելու դեպքում կուտակած աղբը կարող է վարակիչ

հիվանդությունների տարահման պատճառ դառնալ: Աղբը առաջ է բերում միջատների, ճանճերի, ընտանի, թափառող կենդանիների կուտակում, որոնք վարակի տարածման պատճառ են դառնում:

Քաղցրահամ ջուրն աշխարհում աստիճանաբար ձեռք է բերում կարևոր ռազմավարական նշանակություն և միջազգային հարաբերություններում դառնում է լուրջ քաղաքական գործոն: Թեպետ այս ռեսուրսը համարվում է վերականգնվող, բայց նրա պաշարները դասվում են արդեն սպառվող ռեսուրսների շարքին, որովհետև ավելի շատ են աղտոտվում և կորցնում իրենց պիտանելիությունը: Մաքուր և անվտանգ ջրի նկատմամբ մարդու կենսական պահանջը բացտրվում է ջրի բացարձակ ֆունկցիոնալ անփոխարինելիությամբ: Թվում է երկրի քաղցրահամ ջրերի պաշարները բավարար են, սակայն օգտագործման համար մատչելի ջրի քանակը կազմում է բոլոր քաղցրահամ ջրերի 0,003- 0, 16տոկոսը: Բնակչության աճին զուգընթաց մեկ շնչին հասնող ջրի չափաքանակը գնալով պակասում է: Եվ դառնում են էլ ավելի անօգտագործելի:

Ժամանակակից քաղաքակրթությունը ճնշում է գործադրում բնության վրա:

Արդյունաբերական թափոններով բնական միջավայրի աղտոտումը վնասակար ազդեցություն է գործում մարդկանց, կենդանիների, բույսերի, հողի, շենքերի և շինությունների վրա, իջեցնում է մթնոլորտի թափանցիկությունը, բարձրացնում օդի խոնավությունը, մեծացնում մառախլապատ օրերի թիվը, փոքրացնում է տեսանելիությունը և այլն;

Շրջակա միջավայրի պահպանություն

Շրջակա միջավայրի պահպանությունը միջոցառումների հմալիր է, որը նախատեսված է մարդկային գործունեության բացասական ազդեցությունը բնության վրա սահմանափակելու համար:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են՝ շրջակա միջավայրի բնական վիճակի պահպանումը , վերականգնումը, վնասագերծումը:

Բնական պաշարների խելամիտ օգտագործումը , շրջակա միջավայրի վրա ֆիզաքիմիական, կենսաբանական և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը:

- Պետք է սահմանափակել արտանետումները մթնոլորտ ու ջրոլորտ՝ բարելավելու համար էկոլոգիական իրադրությունը:

- Ստեղծել արգելավայր, արգելոցներ՝ պահպանելով բնական համալիրները:

- Սահմանափակել ձկնորսությունն ու որսորդությունը՝ պահպանելով որոշակի տեսակներ :

Դաստիարակություն : Դաստիարակության նպատակը, խնդիրները

Դաստիարաության տեսությունը ուսմունք է դաստիարակության երևույթների, փաստերի, դրանց արտաքին և ներքին կապերի , օրինաչափությունների , սկզբունքների ու մեթոդների, տեխնոլոգիաների, բովանդակության, նպատակի, կազմակերպման ձևերի, ինչպես նաև այդգործընթացի սուբյեկտների փոխներգործության ձևերի, մեթոդների ու միջոցների մասին: Դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողի համատեղ , միմյանց փոփոխակապված, նպատակաուղղված գործունեությունն է դաստիարակվողի անձի ձևավորման նպատակով:

Այսպիսով ` դաստիարակությունը ավագ սերունդների կողմից աճող սերունդներին հասարակական-պատմական փորձի փոխանցման գործընթացն է` նրանց կյանքի և աշխատանքի նախապատրաստելու նպատակով , որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար:

Դաստիարակության նպատակի հիմնախնդիրը մշտապես զբաղեցրել է մարդկությանը` սկսած հնագույն ժամանակներից: Նպատակը կանխատեսվող արդյունք է.դաստիարակության նպատակը համակողմանի և ներդաշնակ զարգացած անձն է, ով տիրապետում է գիտական գիտելիքների հիմունքներին, ունի գիտական աշխարհայացք, կայուն անհամակարգ, մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային, քաղաքացիական, իրավական, տնտեսագիտական, հայրենասիրական, էկոլոգիական, սեռական դաստիարակվածություն,որոնք անձի մեջ դրսևորվում են միմյանց փոփոխակապված ամբողջության մեջ և ապահովում են հասարակության մեջ նրա կենսագործունեությունը:

Դաստիարակությունն ունի մի շարք խնդիրներ, որոնցից հատկապես կարևոր են՝

ա. Դպրոցասաններին հաղորդակից դարձնել հասարակության հոգևոր արժեքներին, ազգային գաղափարախոսությանը, աշխատանքի, գիտության, մշակույթի բնագավառներում համամարդկային նվաճումներին:

բ. Ակտիվացնել սովորողների մտագործունեությունը, իմացական-ճանաչողական ակրիվությունը, ինքնուրույնությունը, ուսումնական դրդապատճառները, ձևավորել հասարակական գիտակցություն, լեզվամտածողությունը և ընդհանուր մշակույթը:

գ. Ջարգացնել դպրոցականների ստեղծագործական ընդունակությունները՝ նրանց սոցիալապես արժեքավոր ,հատկապես աշխատանքային գործունեության մեջ ընդգրկմամբ:

դ .Ձևավորել դպրոցականների աշխարհայացքը, հասարակական վարքը, բարոյականային հատկանիշները, անձնային որակները,արդյունավետ սոցիալականացման համար զարգացնել հաղորդակցական և համագործակցական կարողություններ:

Էկոլոգիական դաստիարակություն

Հասարակության զարգացման ժամանակակից պայմաններում բացառիկ կարևորություն էձեռք բերում << մարդ-բնություն-հասարակություն>> բազմամակարդակ համակարգում կայուն հավասարակշռության պահպանման հիմնախնդիրը, որի լուծման իրական միջոց էկոլոգիական կրթության և դաստիարակության համակարգը: Էկոլոգիա հասկացության հիմքում ընկած է բնությունը, նրա հավասարակշռության պահպանությունը, որը շատ վաղուց է սկսված,իսկ նոր ժամանակներում այն դարձել է կենտրոնական հարց,

համամարդկային հիմնախնդիր, որով զբաղվում է ՄԱԿ-ը, ամբողջ մարդկությունը;

Բնության պահպանությանը մասնակցում են նաև դպրոցականները: Հարցն այսպես է դրված, եթե ուզում ենք ,որ մեր մոլորակը և ժողովուրդները գոյատևեն, ապա յուրաքանչյուր մարդ ,ապա յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր դեռահաս, պատանի, երիտասարդ շրջակա միջավայրի պահպանությունը պիտի դարձնի իր սուրբ պարտականությունը;

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքու.

ա .երբ մարդը բնությունից կորզում է և օգտագործում ոչ այնքան, որքան կարելի է, և ոչ այնտեղ որտեղ կարելի է

բ .երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրության այնքան թափոններ այնքան քանակով, որ բնությունը չի հասցնում <<մարսել>>, այսինքն չի կարողանում ինքնամաքրվել: Երկու դեպքում էլ տեղի է ունենում էկոլոգիական ճգնաժամ :

Էկոլոգիական ճգնաշամը առաջանում է, երբ խախտվում է բնության օրենքներով գործող հավասարակշռությունը, բնությունից վերցնում ենք ավելին, քան կարելի է, և մարդու գործունեության շնորհիվ մեծանում է արտադրական թափոնների ծավալը:

Հարց է ծագում ` ինչը պահպանել և ինչից պահպանել, որպեսզի տեղի չունենա բնական աղետը: Աղտոտումից պահպանել հողերը, գետերը, աղբյուրները, լճերը, խովերը, համաշխարհային օվկիանոսը, մթնոլորտը, կենսոլորտը: Այս հրատապ պահանջը պետք է հասցնել յուրաքանձյուր դպրոցականի, ուսանողի և յուրաքանչյուր մարդու գիտակցությանը: Չէ որ մարդու գոյությունը պայմանավորված է բնությամբ: Եթե դպրոցականը խորապես հասկանա, գիտակցի, որ իր հարազատների ,մերձավորների ամբողջ մարդկության կյանքը, բարօրությունը , նրանց այսօրն ու վաղվա օրը կախված է բնությունից, նա կամովին կհամալրի բնությունը պահպանողների շարքերը:

Շրջակա միջավայրի պահպանությունը իրենց գործուն մասնակցությունը պիտի ունենա ընտանիքը, դպրոցը, ողջ հասարակությունը: Այս գործում մեծ է հատկապես դպրոցի դերը, քանի որ այստեղ է իրագործվում կազմակերպված, պլանավորված դաստիարակությունը: Փաստացի անառարկելի օրինակներով պիտի հասկացնել սովորողներին, թե ինչու պահպանեն բնությունը: Այսպես, ուսուցիչը իր աշակերտներին պարզաբանում է, որ մարն առանց թթվածնի կարող է ապրել երկու րոպե, առանց ջրի` երեք օր: Ներկայացնում է, որ արդյունաբերական արտանետումների հետևանքով վերջին տարիներին մթնոլորտի ջերմությունը բարձրացել 0,5 աստիճանով, որի հետևանքները կարող են ողբերգական լինել: Եթե մթնոլորտի ճնշումը շարունակի բարձրանալ, Անտարկտիդայի հզոր սառցադաշտերը կհալվեն և համաշխարհային օվկիանոսի մակարդակը կբարձրանա` 66մ-ով ու մերձափնյա շատ տարածքներ կնցնեն ջրի տակ: Ավելին, օզոնի շերտը կարող է ճեղքվել և արեգակի վնասակար ,սպանիչ կթափանցեն երկրի կենսոլորտը և աղետի պատճառ կդառնան: Մեր օրերում մթնոլորտը աղտոտում են ատոմային էլեկտրակայանների վթարները, ցինկի, կապարի, սնդիկի, մկնդեղի արդյունաբերությունը և այլն: Աշխարհում տարեկան օգտագործվում է 500-600մլն տ պարարտանյութեր, որոնց մասնիկները ջրի մեջ լուծվելով, առվակներով տարվում են գետերը, ծովերը, զգալի վնասներ պատճառում բուսական, կենդանական աշխարհին, թունավորում գետերում , ծովերում, լճրում բնակվող կենդանիներին: Սովորողների, ընդհանրապես մարդու էկոլոգական կուլտուրան նրա` բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի պատասխանատվությունն է: Այն իրականություն դարձնելու համար դպրոցից, ընտանիքից ողջ հասարակությունից պահանջվում է սովորողների հետ տանել ամենօրյա նպատակաուղղված աշխատանք: Առաջին հերթին նրանց զինել համապատասխան գիտելիքներով: Օրինակ` գիտելիքներ` բնության և հասարակության կապի , գիտելիքներ` բնության գոյության անհրաժեշտության , գիտելիքներ` էկոլոգիայի արժեքների, գիտելիքներ` բնական աղետների և այլնի մասին:

Հնարավոր է արդյոք նման գիտելիքներ տալ դպրոցականներին և ովքեր պետք է տան: Այո հնարավոր է: Այդ աշխատանքը կարող են կատարել կենսաբանության,

աշխարհագրության ,քիմիայի, ֆիզիկայի ուսուցիչները: Մի շարք գիտնականներ մշակել են դպրոցականների էկոլոգիական կրթության սկզբունքները և էկոլոգիական կուլտուրան: Այդ սկզբունքների թվին են դասվում ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի արդյունավետորեն օգտագործումը, էկոլոգիական նյութերի , էկոլոգիական հիմնախնդիրների և բնության պահպանության նպատակով միջոցների կիրառումը: Բնության պահպանության հմար դպրոցականներն ամենուրեք պետք է պահպանեն առողջապահական մաքրությունը՝ չաղտոտեն գետերը, աղբյուրները, հողերը, մթնոլորտը, չկտրեն ծառերը, անտառներում կրակչվառեն և այլն:

Ներկայումս խիստ անհրաժեշտություն է դպրոցներում յուրաքանչյուր տարի ղեկավարությանը ներկայացնել գրավոր հաշվետվություն՝ այդ ուղղությամբ իրենց կատարած աշխատանքի մասին:

Էկոլոգիական դաստիարակության միջոցները և ուղիները դպրոցում

Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակն էաճող սերնդին ծանոթացնել բնության, շրջակա միջավայրի առանձնահատկություններին, պարզաբանելբնության կարևորագույն օրենքները և այն ուղիները , որոնց միջոցով կարելի է պահպանել ու վերարտադրել բնությունը: Անհրաժեշտ է մանկական տարիքից նպատակաուղղված ձևով դաստիարակել պատասխանատվություն մեզ շրջապատող միջավայրի նկատմամբ: Իսկ դրա իրականացումը հնարավոր է հիմնականում սովորողների ճանաչողական գործընթացում , մասնավորապես, երբ նրանք ծանոթանում են Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի տեսակներին: Դա կատարվում է ուսուցման, ինչպես նաև սովորողների հետ հատուկ աշխատանքի՝ բնապահպանական միջոցառումների , ցուցահանդեսների, էքսկուրսիաների, ֆենոլոգիական դիտումների կազմակերպման միջոցով: Այստեղ անգնահատելի մեծ դեր ունի ուսուցիչը: նա յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ

դասը պետք է հարստացնի համոզիչ փաստեր հաղորդելով բնության պահպանության վերաբերյալ: Բնապահպանական գործունեությունը կախված է կենսաբանական համակարգերի տարբեր խմբավորումների կառուցվածքի առանձնահատկությունների իմացությունից: <<Տերն>> թեմայի ուսուցման ժամանակ պետք է պարզաբանել տերևի կառուցվածքը, ածխաթթուի գազի և ջրի յուրացման կարևորությունը, որպես ֆոտոսինթեզի կարևոր պայման: Աշակերտը պետք է ընթրնի , որ տերևի վնասվածքը կարող առաջացնել ֆոտոսինթեզի պրոցեսի անկում և նույնիսկ բույսի մահ: Այստեղ կարելի է տալ օղի աղտոտության ազդեցությունը կենդանի օրգանիզմի վրա:<<Մեծ է բույսերի տիեզերական նշանակությունը. Կանաչ բույսերի միջոցով իրականանում է Երկրի և Արևի կապը: Բույսերը կլանում կյուրացնում են Արևի էներգիան, ստեղծվում են կենդանի օրգանիզմները,այդ թվում նաև մարդը>>: Այս միտքը նպաստում է,որ աշակերտները հասկանան, յուրաքանչյուրը պետք է խնայողաբար վերաբերվի շրջակա միջավայրի բուսականությանը,պահպանի և վերարտադրի այն՝ որպես իր գոյության աղբյուրը: Մարդկության ահանջմունքների անընդհատ աճը, բուսական ռեսուրսների արագ սպառման պատճառ կարող են դանալ: Դրա համար էլ մարդը պետք է իմանա, թե ինչքան և ինչպիսի բուսական հարստություն նա կարող է օգտագործել,որպեսզի չխախտվեն տեսակների համակցությունների վրականգնման գործընթացները: Ուսոցիչը պետք է ընդգծի ,որ բուսական աշխարհի աշարները առայժմ լրիվ բացահայտված չեն և արգելոցների ստեղծումը պայմանավորված է և դրանով, և բուսական համակեցությունների ու կենդանական տեսակների պահպանությամբ: Ուսուցման նման ձևը նպաստում է ծրագչային նյութի յոթրացմանը, գիտական գիտելիքների ձեռքբերմանը և ամրապնդմանը, էկոլոգիական և դաստիարակության իրականացմանը:

Էկոլոգիական դաստիարակության նպատակն ու խնդիրները

Էկոլոգիական դաստիարակության նպատակը անձի ` հասարակության և բնության օրենքներին համաձայն էկոլոգիական մշակույթի և էկոբարոյական վարքագծի ձևավորումն է:

Էկոլոգիական դաստիարակության հիմքում ընկած են էկոլոգիական հասկացությունների, գիտելիքների, արժեքների, պրակտիկ փորձի յուրացումը:

Էկոլոգիական դաստիարակության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է; եթե ճիշտ օգտագործվեն տարբեր ուսուցման մեթոդներ՝ կդաստիարակվեն էկոլոգիապես գրագետ ու ազնվաբարո մարդ:

Նպատակաուղղված կրթական գործընթացում են սովորողների կողմից յուրացվում բնագիտական առարկաների հիմունքները, ձևավորվում են բնության հետ ճիշտ շփվելու կարողությունները, ձևավորվում են արժեքային կողմնորոշումները, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքը:

Էկոլոգիական դաստիարակությունն ունի փուլային բնույթ՝

ա. Էկոլոգիական պատկերացումների, հասկացությունների ձևավորում,

բ. Մարդակենտրոն էկոլոգիական գիտակցությունից Էկոկենտրոնի անցում,

գ. Էկոլոգիական գործունեության իրականացում,

դ. Բնության մեջ և շրջապատում անվտանգ վարքգծի դրսևորում:

Սկսած <<Ես և շրջակա աշխարհը>>առարկայի առաջին դասից՝ կաօ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը այդ ամբողջության մի մասնիկը: Մա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե դրական, թե բացասական իմաստով;

Էկոլոգիական դաստիարակության խնդիրներն են՝

- 1 . Ժամանակակից աշխարհում էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ ինտեգրված գիտելիքների համակարգի յուրացումը,
- 2 . Էկոլոգիական տեսանկյունից նպատակահարմար էվարքագծի , էկոլոգիական պատասխանատվության դրդապատճառների, պահանջումների ձևավորումը,
- 3 . շրջակա միջավայրի էկոլոգիական աղտոտվածության, բնական և էկոլոգիական գործոնների հարաբերության գնահատման կոմպետենցիաների ձևավորումը,
- 4 . Էկոլոգիական դաստիարակության բովանդակության արդիականացում, էկոլոգիական խնդիրների լուսաբանումն ուսումնական առարկաների դասվանդման գործընթացում,
- 5 . կրթական հաստատությունում անհրաժեշտ միջավայրի ձևավորումը, ուսումնական նյութատեխնիկական բազայի ապահովումը;
- 6 .էկոլոգիական դաստիարակության մեթոդական համալիրի կատարելագործումը:

Էկոլոգիական դաստիարակության բովանդակային կարևոր բաղադրիչներ են մարդու և բնության փոխհարաբերությունների, կենսաբանական համակարգերի էվոլյուցիայի, մարդու առողջության պահպանման վերաբերյալ տեսությունները, հայեցակարգերը, ինչը բնութագրում է մարդուն և բնությունը՝ որպես արժեքի: Էկոլոգիական դաստիարակության արժեքային բաղադրիչ էշրջակա միջավայրի էկոլոգիական վիճկի գնահատումը: Դրա արդյունավետ իրականացման մեթոդներ են զրույցը, դաստիարակությունը, բանավեճը, պատմելը և այլն:

Էկոլոգիական դաստիարակության գործընթացում արդյունավետ են հանմագործակցային, կոլեկտիվ, խմբային աշխատանքի ձևերը: Էկոլոգիական դաստ. համար արդյունավետ մեթոդ է ,հատկապես, բանավեճը: Այն առավել նպատակաուղղված է սովորողների ինքնուրույնության, ճանաչողական հետաքրքրությունների և էկոլոգիապես անվտանգ պրակտիկ գործունեության խթանմանը: Ներկայումս կրթական համակարգում տեղեւտվատական

տեխնոլոգիաների ներդրումը նոր հնարավորություններ է ընձեռում էկոլոգիական դաստիարակության արդյունավետ իրականացման ուղղությամբ, օրինակ՝ էլեկտրոնային տեքստերով աշխատանքը, մոդելավորումը, տեսանյութերի տեղադրումը և այլն:

Եզրակացություն

Բնության մեջ ամեն ինչ ներդաշնակ է: Միայն պետք է չխախտել այդ ներդաշնակությունը: Ըստ նրկայացված աշխատանքի մանրամասն խոսվում է դաստիարակության համակարգի, խնդիրների, նպատակի մասին: Ներկայացվում է նաև էկոլոգիական դաստիարակությունը, որի հիմքում ընկած է բնությունը, նրա հավասարակշռության պահպանումը: Այնտեղ ներկայացվում է նաև էկո. դաստիարակության նպատակն ու խնդիրները: Այս աշխատանքը նպատակաուղղված էր տարրական դասարանների, ոչ միայն, աշակերտների պատկերացումների ձևավորմանը: Եվ հիմնական նպատակը՝ էկոլոգիական դաստիարակության գործընթացի հիմքում ընկած են սովորողների հոգեկան որակները, բնության նկատմամբ նրանց պատասխանատվությունը, արժեքային դիրքորոշումներն ու հարաբերությունները, վերաբերմունքը շրջապատող ողջ աշխարհի նկատմամբ:

Գրականություն

1. Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքները, Կ. Վ. Գրիգորյան,

Ա. Հ. Եսայան, Ա. Վ. Խոյեցյան և ուրիշներ:

2. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան «Մանկավարժություն» 2005:

3. Դպրոցի կառավարման հիմունքները, Լ. Թ. Ասատրյան, Մ. Ա. Ասատրյան. Ն. Ա. Սաֆարյան, Երևան 2018:

4. О. А. Соломенникова, Занятия по формированию элементарных экологических Представлений, 2012 г.

